ՅՈԼՅԱՆ
ՀՀ ԱՆ ԱՐՅՈՒՆԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ
ՈՒՌՈՒՑՔԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ

08.08.2025 N 02-348

Արֆարմացիա ՓԲԸ-ի տնօրեն Ա. Հովհաննիսյանին
ՀՎՀՀ՝ 02505735
Հասցե՝ ք. Երևան, 0064, Ռաֆֆու 111
Հեռ՝ 060 75-99-99
Էլ. փոստ՝ tender@arpharm.am

Ծանուցում

Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին

Հարգելի պարոն Հովհաննիսյան,

ՀՀ ԱՆ ««Յոլյան» արյունաբանության և ուռուցքաբանության կենտրոն» ՓԲԸ-ի և Արֆարմացիա ՓԲԸ-ի միջև 19.12.2024թ. կնքվել է ՅԱԿ-ԷԱՃԱՊՁԲ-25/07-2 ծածկագրով գնման պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր 24326933.98 AMD (քսանչորս միլիոն երեք հարյուր քսանվեց հազար ինը հարյուր երեսուներեքդրամինսունելումա) ՀՀ դրամ ընդհանուր գնով:

30 հուլիսի 2025թ. Արֆարմացիա ՓԲԸ-ի կողմից ստացվել է թիվ 01/144 գրությունը /կցվում է/, համաձայն որի վերջինս, մատակարարման անհնարինությամբ պայմանավորված, հրաժարվում է մատակարարել պայմանագրով նախատեսված Լևոֆլոքսացին դեղորայքի մնացորդային քանակը՝ 8550 հատ:

Հիմք ընդունելով Գնումների մասին ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի ա ենթակետը, ՀՀ Կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի N 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետը, պայմանագրի 8,11 կետը, ՀՀ ԱՆ ««Յոլյան» արյունաբանության և ուռուցքաբանության կենտրոն» ՓԲԸ-ն մասամբ լուծում է և Արֆարմացիա ՓԲԸ-ի հետ կնքված ՅԱԿ-ԷԱՃԱՊՁԲ-25/07-2 ծածկագրով գնման պայմանագիրը:

YEOLYAN
HEMATOLOGY AND ONCOLOGY CENTER, MINISTRY OF HEALTH OF ARMENIA

blood.am
010 28 38 00
Հ. Ներսիսյան փ., 72, Երևան 0014

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու դեպքում, Պատվիրատուի ղեկավարի պատճառաբանված որոշման հիման վրա լիազորված մարմինը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Ընդ որում, սույն կետում նշված որոշումը Պատվիրատուի ղեկավարը կայացնում է գնման ընթացակարգը չկայացած հայտարարվելու կամ կնքված պայմանագրի վերաբերյալ հայտարարությունը հրապարակելու կամ պայմանագիրը միակողմանի լուծելու մասին հայտարարությունը (ծանուցումը) հրապարակելու օրվան հաջորդող տասներորդ օրը: Որոշումը կայացվելուն հաջորդող օրը այն գրավոր տրամադրվում է լիազորված մարմնին և մասնակցին: Լիազորված մարմինը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում որոշումն ստանալուն հաջորդող քառասուներորդ օրվա դրությամբ մասնակցի կողմից որոշման բողոքարկման վերաբերյալ հարուցված և չավարտված դատական գործի առկայության դեպքում՝ տվյալ դատական գործի եզրափակիչ դատական ակտն ուժի մեջ մտնելու օրվան հաջորդող հինգերորդ օրը, եթե դատական քննության արդյունքով որոշման կատարման հնարավորություն չի վերացել:

Ելնելով վերոգրյալից՝ տեղեկացնում ենք, որ եթե՝

- սույն կետով նախատեսված՝ լիազորված մարմնին որոշումը ներկայացվելու վերջնաժամկետը լրանալու օրվա դրությամբ պայմանագիրը կնքած անձը վճարել է պայմանագրի կատարման և որակավորման ապահովման համար սահմանված գումարները՝ Պատվիրատուի 1930030219151000 հաշվեհամարին, ապա Պատվիրատուն տվյալ մասնակցին ցուցակում ներառելու պատճառաբանված որոշումը չի ներկայացնում լիազորված մարմնին.

- պայմանագիրը կնքած անձի կողմից հայտի, պայմանագրի և որակավորման ապահովման գումարի վճարումն իրականացվել է լիազորված մարմնին որոշումը ներկայացվելու վերջնաժամկետը լրանալուց հետո, բայց ոչ ուշ, քան պայմանագիր կնքած անձին ցուցակում ներառելու վերջնաժամկետը լրանալու օրը, ապա Պատվիրատուն դրա մասին գրավոր տեղեկացնում է լիազորված մարմնին, որի հիման վրա մասնակիցը չի ներառվում ցուցակում:

Հարգանքով,

ՏՆՕՐԵՆ ՀԱՅԿ ԳՐԻԳՈՐՅԱՆ

Կատարող՝ Դիանա Մադոյան
Գնումների համակարգող
Հեռ՝ 093023401